

Պատասխան Առաջնորդ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոսին

ԱՄԲՈՂՁԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Երբ վկայելու համար դատարան կը կանչուինք՝ նախ կ'երդնուենք Ս. Գրքի վրայ թէ պիտի յայտնենք մշմարտութիւնը, ամբողջական մշմարտութիւնը և միայն մշմարտութիւնը: Գիտենք նաեւ որ եթէ չյարգենք մեր երդումը օրէնքը մեզ բանտարկութեամբ կը պատժէ:

Երբ բարձրաստիճան եկեղեցական մը իր տեղեկատուութիւնը իր ստորագրութեամբ պաշտօնապէս ժողովի մը կը ներկայացնէ, նմաներդում մը իրմէ չենք պահանջեր, որովհետեւ կ'ակնկալենք որ իր կրած հանգամանքը զինք պիտի պարտադրէ մշմարտութիւնը, ամբողջ մշմարտութիւնը և միայն մշմարտութիւնը յայտնել: Կ'ակնկալենք նաեւ որ իր տեղեկատուութիւնը պիտի ըլլայ հիմնուած փաստելի իրողութիւններու վրայ և ոչ թէ անձնական զգացումներէ տարուած կարծիքներու և կամ հակառակորդներու հասցէին ուղղուած անվայել անակախներու շարքի մը վրայ:

Իժմախտաբար 3-5 Մայիս 1979 թուակիր Գերշ. Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանի 77-րդ թեմական Պատգամաւորական ժողովին ներկայացուցած տեղեկատուութեան Գանատայի հարցին վերաբերեալ մասը ոչ վերոյիշեալ պայմանները կը լրացնէ, ոչ ալ ամբողջ մշմարտութիւնը կը ներկայացնէ:

Հետեւեալքար ի սէր արդարութեան՝ խղձի պարտք կը համարենք հետեւեալ գրութիւնը հանրութեան ներկայացնել:

Թորգոմ Արքագան իր տեղեկատուութեան մէջ Գանատայի հարցը երեք մասերու կը բաժնէ ըստ հետեւեալին.

- ա/ Արիս Արքագանին անհատական հարցը
- բ/ Թորոնթոյի երկրորդ ծուխի հարցը
- գ/ Գանատայի անկախ թեմ ըլլալու հարցը

Տեղեկատուութեան 9-րդ էջին մէջ Թորգոմ Արքագան կը յայտնէ թէ այս երեք հարցերը իրարու հետ կապ չունին: Այս հարցերը Գանատայի մէջ անջատ թեմ մը կազմելու պահանջին հետ միացնող կամ նոյնացնողները ըստ Թորգոմ Արքագանին յատուկ տրամաբանութեան, «անպարարներ», կ'անուանուին:

Ըստ մեր տրամաբանութեան այս երեք հարցերը իրարմէ զատելով, իրարմէ անկախ հարցերու երեւոյթին տակ ներկայացնելը հանրային կարծիքը շփոթութեան մատնելու միակ միջոցն է: Նոյնինքն Թորգոմ Արքագանի տեղեկատուութեանէն ալ բացայայտ է որ այս երեք հարցերուն ալ առանցքը կազմող անձը նոյն Արիս Արքագանն է: Դարձեալ նոյն տեղեկատուութենէն որոշ է որ հարցերէն մէկը միւսէն ծագում առած է: Տեղեկատուութեան 14 էջերէն 9 էջերը Արիս Արքագանը հանրային կարծիքի առջեւ նսեմացնելու յետին նպատակը կը կրեն: Արքեպիսկոպոսի մը անվայել լեզուով, «բարեխամ» Առաջնորդը իր խաչակիր եղբայրը, Հայաստանեայց եկեղեցւոյ մէկ եպիսկոպոսը, իր ստորագրութեան տակ, պաշտօնական ժողովի մը առջեւ, ինքնահաւան, խաբբայ, անկարգ, գեղձարար, անպատկառ, խռոնակիչ և վարկաբեկող կ'անուանէ:

իրականութիւնը այն է որ, ինչպէս Թորգոմ Արբազանն ալ շատ լաւ գիտէ, Արիս Արբազան Գանատայի Առաջնորդական Փոխանորդ նշանակուած է Գանատան անշատ թեմի մը վերածելու նպատակաւ, Վեհափառ Հայրապետի փափաքին հիման վրայ և Վեհափառն ալ այս նպատակաւ զինք եպիսկոպոսացուցած է: Այս իրողութեան լաւագոյն փաստը Թորգոմ Արբազանին 24411 թիւ գրած նամակն է, որ 4 նոյեմբեր 1974-ին, Թորոնթոյի ծխական Խորհուրդի նախագահ Հայր ժիրայր Վրդ. Թաշմեանին ուղղուած է: Այս նամակին մէջ Թորգոմ Արբազան կ'ըսէ. «...Սինչ այդ կը յանձնարարենք որ իւրաքանչիւր ծխական Խորհուրդ խորհրդակցութեան նիւթ ընէ, Գանատայի մեր համայնքները առանձին թեմի վերածելու ծրագիրը որուն մասին խորհրդակցեցանք Սեպտեմբեր 2-ին գումարուած ժողովին մէջ, ի Թորոնթօ, և այդ առնչութեամբ առնուելիք քայլերը, որոնցմէ առաջինն է Տ. Արիս Եպիսկ. Շիրվանեանին իբրեւ Առաջնորդի Փոխանորդ պաշտօնի կոչուելը»:

Արիս Արբազանին նախորդող Փոխանորդներն ալ կրնան վկայել որ վերջին տասը տարիներու ընթացքին Գանատան անշատ թեմի վերածելու համար տարուած բոլոր աշխատանքները Թորգոմ Արբազանի շրջանին ապարդիւն մնացած են:

Երբ Արիս Արբազանին գործունէութիւնը կարճ ժամանակի մը մէջ, հասաւ այնպիսի վիճակի մը, որ այլեւս Վեհափառին Գանատան անշատ թեմի մը վերածելու փափաքը պիտի իրականանար, այս կացութեան արգելք ըլլալու միակ միջոցը Թորգոմ Արբազանին համար, Արիս Արբազանը գործին գլխէն հեռացնելու պատրուակներ հնարելուն մէջ կը կայանար:

Ժիշդ այս պատճառաւ է որ, Արիս Արբազանին Վեհափառին փափաքը հանրութեան հաղորդած ըլլալը, Վեհափառը վարկաբեկած կամ անոր անունը շահագործած և կամ անոր լիազօր պատուիրակ ըլլալը ձեւացուցած կը նկատուի Թորգոմ Արբազանի տեղեկատուութեան մէջ:

Պարզեալ նոյն նպատակաւ երբ Թորգոմ Արբ. Արիս Արբազանին փոխանորդութեան պաշտօնին վերջ տուաւ 3/2/78 թուակիր և 25577 թիւ նամակով, այդ նամակին մէջ իր որոշումը արդարացնելու համար Թորոնթոյի ծխական Խորհուրդին Արիս Արբազանէն դժգոհ ըլլալը յայտնեց: Երբ այդ շրջանի ծխական Խորհուրդը խղճի պարք համարեց 9/3/78 թուակիր նամակով մը իր զարմանքը յայտնել և յիշեցնել Թորգոմ Արբազանին որ իրենք երբեք Արիս Արբազանի մասին ուէ գանգատ մը չէին ներկայացուցած, Թորգոմ Արբազան տեսաւ որ Արիս Արբազանի փոխանորդութեան վերջ տալու համար իր ներկայացուցած պատճառը ոչ թէ միայն փաստելի չէր, այլ ուղղակի մերժուած է իր ծխական Խորհուրդին կողմանէ: Այս կացութեան առջև Թորգոմ Արբազան փոխանակ ի սէր արդարութեան իր որոշումը փոխելու, որոշեց նոր պատճառներ հնարել և ներկայացնել իր յիշեալ տեղեկատուութեան մէջ, ժողովականներէն ծածկելով իր գրած 3/2/78 թուակիր 25577 թիւ նամակին բովանդականութիւնը:

Իր տեղեկատուութեան մէջ ներկայացուցած նոր պատճառները եթէ ուշադրութեամբ կարդանք պիտի տեսնենք որ ասոնք կամ չգործուած յանցանքներու մասին են - յանցանքներ որոնց գործուելուն արգելք ըլլալու համար Առաջնորդը իր փոխանորդը, զգուշացուցած է - և կամ ուէ կազմակերպութեան մը զանազան խաւերուն մէջ, իշահ այդ կազմակերպութեան, տեղի ունեցած կարծիքի փոխանակութիւններէն ծագում առած պատահական դէպքեր են: Կարելորդ, զանազան թուականներու պատահած այս դէպքերը յիշելէ յետոյ, Թորգոմ Արբազան տարօրինակ միամտութեամբ մը (այս տիտղոսը մենք չէ որ իրեն կուտանք, Արբազանը ինքը իր տեղեկատուութեան մէջ ինքզինքին հարմար դատած է),

տեղեկատուութեան 7րդ էջին մէջ կը յիշէ թէ արդէն իսկ Օգոստոս 1975ին թեմական Խորհուրդի Ատենապետը, իր առաջին իսկ Արիս Սրբազանի հանդիպումին սպառնացած է Արիս Սրբազանը փոխանորդութեան պաշտօնէն հեռացնել: Այս կը նշանակէ որ երբ տակաւին Թորգոմ Սրբազանին որպէս պատճառ թուարկած ղէպքերէն ունէ մէկը չէր պատահած թեմական Խորհուրդի մէջ, մեր բացատրած պատճառաւ, Արիս Սրբազանին պաշտօնին վերջ տալու համար պատրուակներ կը փնտոէին: Հետեւաբար տրամաբանութիւնը կը պահանջէ որ Արիս Սրբազանին պաշտօնին վերջ տալու համար Թորգոմ Սրբազանի ներկայացուցած բոլոր պատճառները աւելորդ պատրուակներ նկատենք:

Ճիշդ այս պատճառաւ ալ, Վեհափառին կամքը կատարել ուզող սիրուած և յարգուած եպիսկոպոսի մը պաշտօնին վերջ տրուած ըլլալը իմացող 600է աւելի ազգայիններ (600 ստորագրեալներն ալ տրատու անդամ չէին, նկատի առնելով որ տրատու անդամներուն թիւը 300ի շուրջ է) Վեհափառէն և Թորգոմ Սրբազանէն խնդրեցին որ այդ վերաքննուի: Թորգոմ Սրբազան ինչպէս իր տեղեկատուութեան 9րդ էջին մէջ ալ կը խոստովանի իրորոշումը չուզեց հանրային կարծիքի ենթարկել:

Ներկայ դարուս ոամկավար դրութիւններու մէջ, Ճիշդ է որ մենք մեր առաջնորդները կը նորենք և անոնց որոշ լիազօրութիւններ կուտանք, բայց երբեք անոնց «անսխալական» ըլլալը չենք ընդունիր: Ոչ ալ անոնք հաղորտան իշխաններու կամ բռնակալներու լիազօրութեամբ կը ծանչնանք: Թորգոմ Սրբազանին պատկանած ամենէն հզօր պետութեան նախագահն իսկ, *President Carter* ը հակառակ իրեն տրուած լայն իրաւասութեան սահմաններուն չի կրնար հանրային կարծիքին, փափաքին կամ կամքին դէմ որոշումներ առնել ոչ ալ կրնայ ըսել թէ, նախագահին որոշումները հանրային կարծիքի չեն ենթարկուիր:

Այս պաշտօնները կ'ստանձնուին ոչ թէ անձնական վրէժխնդրութիւնները կամ փառամոլութիւնները ի գործ դնելու համար, այլ առաջնորդուող զանգուածին կամքը ամենէն օգտակար կերպով իրագործելու համար:

Թորգոմ Սրբազանին այս դիրքաւորումը պատճառ եղաւ որ, ըստ կանոնադրութեան, բաւարար թիւով տրատու անդամներ 17/2/78 ին ծխական Խորհուրդէն անդամական ժողով մը պահանջեն: Թորգոմ Սրբազան փոխանակ օրինական ճամբով հանրային կարծիքը հանդարտեցնելու միջոցներ փնտոելու, հրահանգեց որ այս ժողովին տեղ անդամները թէյասեղանի մը հրաւիրուին: Այս թէյասեղանին Թորգոմ Սրբազանին իր տեղեկատուութեան մէջ անկարգ անուանած անդամները կրկին պնդեցին որ օրէնքը յարգուի, բայց այս թէյասեղանի հաւաքոյթը կազմակերպողները կամ Թորգոմ Սրբազանին խամաճիկները ամէն տեսակ խայտառակութեան դիմեցին, նոյնիսկ Արիս Սրբազանը բռնի ուժով լռեցուցին և անարգեցին որուն հետեւեցով ներկայ տրատու անդամներուն մեծ մասը սրահը լքեց, Տիկնանց Սիութեան Ատենապետուհին, Երիտասարդաց Ատենապետը ինչպէս նաև ծխական Խորհուրդին ընթացքը նախապէս սխալ գտնող երեք ծխական Խորհուրդի անդամներ հրաժարեցան, և բնականաբար Ապագայ թերթը այս թէյասեղանը որպէս շատ յաջող հաւաքոյթ մը ըլլալով ներկայացուց: Այս կացութեան առջև ոմանք յուսահատեցան, եկեղեցիէն բոլորովին հեռացան, ոմանք ալ երկրորդ ծուխ մը հիմնել որոշեցին: Այս տեսակ տագնապի մը ընթացքին երբ իշխանութեան գլուխը գտնուողները օրէնքը չեն յարգեր այլևս իրաւունքը չեն ունենար պահանջելու որ իրենց ընդդիմադիրները նոյն օրէնքը շարունակեն յարգել: Ոչ ալ իրաւունք կուենան, որպէս անկարգութեան նախընթացք ստեղծողներ, ուրիշները անկարգ կուչել:

Այս թէյասեղանի խայտառակութենէն վերջը երկրորդ ծուխը հիմնողները, որոնց շարքին Արիս Սրբազան երբեք տեղ գրաւած չէ, ① ոչ մէկ առիթով վեհափառին անունը չարաչար գործածած են: Վեհափառը իրենց ամէն կարելոր քայլերէն տեղեակ պահած են, նոյնիսկ որոշ շրջան մըն ալ փորձած են իրենց նպատակը Թորգոմ Սրբազանին հետ խորհրդակցաբար իրականացնել: Հակառակ այս իրողութիւններուն Թորգոմ Սրբ. իր տեղեկատուութեան մէջ Ս. Խաչի հիմնադիրները անկարգ գեղծարարներ կը կոչէ, գեղծարարութեամբ դրամ հաւաքեցին զրուէ և կաւելցնէնաւ որ բարեխնամ՝ Առաջնորդը զգուշացուցած է զիրենց Պետութեան կամ հանրութեան առջև խայտառակելէ:

Թորգոմ Սրբ. շատ լաւ գիտէ որ ոչ մէկ պետութիւն իր սահմաններուն մէջ գեղծարարութիւնը կարտօնէ, ոչ ալ գեղծարարութեան համար արտօնագիր մը կը շնորհէ: Ան գիտէ նաև որ այս մարդիկը որպէս գեղծարար եթէ պետական իշխանութիւններէն մատնէր, ինքը և իր առաջնորդարանը օրէնքի առջև շատ ծանր պատասխանատուութեան տակ պիտի մնար: Իսկ զալով հանրութեան առջև խայտառակելու հարցին դարձեալ Թորգոմ Սրբ. գիտէ որ իր ներկայ փոխառորդ օտար եկեղեցիին մօտ պէտք եղած մատնութիւնը կատարած է Հայ զանգուածի մը պաշտամունքի ազատութեան արգելք հանդիսանալու նպատակաւ բայց չէ յաջողած:

Տեղեկատուութեան Ցրդ էջին մէջ Թորգոմ Սրբ., Արիս Սրբ.ին փոխառորդութեան շրջանին հաստատուած Երկրորդ ծուխի անդրադառնալով 1978 Յունուարին ուրիշ անակնկալի մը առջև դրուեցանք կրսէ: Թորգոմ Սրբ. գիտէ որ ինքը Երկրորդ ծուխը հիմնել հրահանգած է և 30/12/77 թուականին, 9 հոգի-նոց ծխական Խորհուրդը իր հրահանգին վրայ նշանակած է և իր հրահանգովն ալ Ս. Երրորդութիւնն եկեղեցւոյ ծխական Խորհուրդը տեղեակ պահուած է, իրողութիւն մը որ այս եկեղեցւոյ ատենագրութիւններուն մէջ արձանագրուած կը մնայ մինչև այսօր, և դարձեալ իր հրահանգովն ալ այս յիշուած ծխական խորհուրդը լուծուած է:

Արիս Սրբազան պարզապէս իր հրահանգներուն հետեւած է ինչպէս *Hamilton*՝ ի և *Ottawa*՝ ի մէջ հաստատուած և օտար եկեղեցիներուն մէջ գործող ծխական խորհուրդներու պարագային որոնք մինչև այսօր գոյութիւն ունին:

Ոչ մէկ առիթով Հ.Յ.Ը.Մ. հետ ունէ բանակցութիւն տեղի չէ ունեցած երկրորդ ծուխի անունով կամ անոր հաշուոյն, ինչպէս Թորգոմ Սրբ. կը պնդէ բայց այս ժողովներուն մասնակցողները կը մերժեն:

①. - Թորգոմ Սրբ. իր տեղեկատուութեան 12րորդ էջին մէջ կը յայտնէ թէ Արիս Սրբ. Գանատական Պետութեան դիմած է Ս. Խաչ անուն անկախ համայնք մը կազմելու համար: Բացարձակապէս Արիս Սրբ. Պետութեան նման դիմում մը չէ կատարած: Ունէ մէկը կամ Թորգոմ Սրբ. ունէ փաստ մը չեն կրնար ներկայացնել հակառակը ապացուցանելու համար: Տասներորդ էջին մէջ Թորգոմ Սրբ. կը տեղեկացնէ որ ծխական ընտրութիւններէն դժգոհ լսմբակ մը փորձած են ընտրութիւններուն արդիւնքը բեկանել և Թեմական Խորհուրդի անունով Պետութեան դիմում կատարել Ս. Խաչը հիմնելու համար: Դարձեալ Թորգոմ Սրբ. ոչ մէկ փաստ ունի իր ուսածը ապացուցանելու համար, որովհետև ոչ մէկ խմբակ ընտրութեան արդիւնքը բեկանելու փորձ մը ըրած է ոչ ալ Թեմականի անունով Պետութեան դիմում կատարածէ:

Տեղեկատուութեան Ցրդ էջին մէջ Թորգոմ Սրբ. առանց իր վաւերացման ծխական Խորհուրդը կազմողներուն հետ ոչ մէկ կապ ունեցած ըլլալը կը շեշտէ: Թորգոմ Սրբազան պէտք է լաւ յիշէ որ մէկէ աւելի անգամներ այս անձերուն հետ հանդիպում և հաղորդակցութիւններ ունեցած և նոյնիսկ անոնք իր թելադրութեան հիման վրայ 21/7/78 ին Օննաչման համար իրեն դիմում կատարած են:

Տարօրինակ է որ տեղեկատուութեան 11րդ էջին մէջ Թորգոմ Սրբ. իր Վեհափառէն ստացած երկու հեռագիրներուն վերաբերիչ ըլլալը կրնադուստի բայց կը խուսափի անոնց բովանդակութիւնը ժողովականներուն տեղեկացնելէ: Իսկ ասոր փոխարէն, նոյն էջին վրայ, աւելորդ չի համարեր անստորագիր նամակի մը բովանդականութիւնը ժողովականներուն հաղորդելը որուն նպատակը երկրորդ ծովախմբի հիմնողներուն կուսակցական գոյն մը տալ է, հակառակ իրեն ծանօթ այն մշտնադատութեան թէ Ս. Խաչի հիմնադիրներէն ոչ մէկը ունէ կուսակցութեան չի պատկանիր:

Թորգոմ Սրբ. իր տեղեկատուութեան վերջին էջին մէջ կը խոստանայ թէ ինչ ուղղութիւն որ Ամենայն Հայոց Հայրապետը վերջնականապէս որոշէ անոր փափաքին ընթացք պիտի տայ: Մինչդեռ իր տեղեկատուութեան թուականէն նուազագոյն ամիսուկէս առաջ Վեհափառը անգամ մը ևս իր որոշած ուղղութիւնը Թորգոմ Սրբազանին յիշեցուցած է և մինչև մեր այս գրութեան թուականը տակաւին Թորգոմ Սրբ. Վեհափառին փափաքին ընթացք չէ տուած:

Տարօրինակ է նաև որ Թորգոմ Սրբ. իր հաստատած յանձնախումբին անդամներուն մեծամասնութիւնը, իրեն գեղծարար և անկարգ կոչած մարդոց մէջէն ընտրած է, ինչպէս կը խոստովանի իր տեղեկատուութեան 11րդ էջին 6րդ հատուածին մէջ: Եթէ Թորգոմ Սրբ. գիտակցաբար գեղծարարներէ և անկարգներէ բաղկացած յանձնախումբ մը հաստատած է, աններելի առաջնորդական սխալ մը գործած է: Իսկ եթէ այս մարդոց իրականութեան մէջ անկարգ և գեղծարար ըլլալուն չի հաւատար պէտք է զգուշանայ զրպարտութիւններէ:

Վերջապէս մեր պատիւը փրկելու համար կը խնդրենք Թորգոմ Սրբազանէն որ փոխանակ 13րդ դարու հաւատաքնական մտայնութենէ մը ներշնչուած ամբողջ համայնք մը պատժել սպառնացող շրջաբերականներ հրատարակելու, թող մեզ որպէս գեղծարարներ անմիջապէս դատարան յանձնէ: Այլապէս իր լռութիւնը իր համբերատարութեան վերագրելէ աւելի զգիտակցաբար պատուաւոր մարդոց պատիւը մրոտելու մարմաշի մը պիտի վերագրենք:

27 Յունիս 1979

*Պրոֆ. Ն. Պիպուկ*

Տր. Նուպար Ալեանք

*Ս. Կալէ Բերամեթեան*

Տր. Վաչէ Բերամեթեան

*Գ. Դրասխանյան*

Պր. Կարօ Խաչայեան

*Պր. Պետրոս Մուշեղեան*

Պր. Պետրոս Մուշեղեան

*Ս. Գրիգոր*

Պր. Սուրեն Էվրան

*Պր. Ս. Ա. Ա. Արմաշեան*

Տր. Վարդան Այնաճեան

*Պր. Վահէ Ավանես*

Տր. Վահէ Ավանես

*Պր. Ժիրայր Թորիկեան*

Պր. Ժիրայր Թորիկեան

*Պր. Գեղամ Մարգարեան*

Պր. Գեղամ Մարգարեան

*Պր. Մարտիրոս Բեյլան*

Տր. Մարտիրոս Բեյլան

*Պր. Մանուէլ Սազարե*

Տր. Մանուէլ Սազարե

*Պր. Արմէն Քիւրքմեա*

Պր. Արմէն Քիւրքմեա

*Պր. Լ. Չեօմէլ Էքմեա*

Պր. Լ. Չեօմէլ Էքմեա

ճարտարագէտ